

զի « Ոչ ոք իւր սրտմտութիւնը անիրաւ կը գտնէ : » Ուստի անհանգստութիւնը վրանիս կը տիրէ, եւ այս անհանգստութեամբ մեր տարակուսանքը կաճի, այնպէս որ շուրթի մը հետ կը կոտորտինք, կամ թէ շուրթը կը ստիպէ գմեղ մարմնոյն դէմ պատերազմելու : Կուգեմ վարժիլ զգարը բանի տեղ չդնելու, տեսնելու եւ ոչ գուշակելու, դատողութիւնս գահավեժ կերպով մը չընելու : Կըսես որ եթէ ես այս ճամբան բռնեմ, ամենուն խաղալիքը պիտի ըլլամ, եւ ամէն օր հազար ու բիւր անգամ պիտի խաբուիմ. ես այլ քեզի պատասխան կատարեմ թէ հապա դուն ալ չես վախնար որ այդպիսի ցաւալի ճարտարմտութեամբ քեզի նման մարդկանց պատիւն ու համբաւը ոտքի տակ կ'առնես : Ես աւելի կուգեմ խաբուիլ, քան թէ

ԲԱՐԻ ԹՐԱՏՆԵՐ.

Քունն ու կերակուրը կարելի է վաղուան ձգել, պատեհութիւնն ու ժամանակը ոչ երբեք :

Միշտ պատրաստ եղիր :

Չգիտցած բանդ հարցընելու մի ամբջնար :

Եթէ փողերդ (փարա) լաւ պահես, ոսկիներդ՝ իրենք իրենցմէ կը պահուին :

Աշխատանքի համար երբեք մի տնտընար, ձեռուրներդ աշխատանքի վարժեցուր. հանգրստութիւն սիրող կատուն մուկ չկրնար բռնել :

Գոց ձեռքով ճանճ անգամ չբռնուիր :

Նաեւ ամենափոքր բաները կը ցածիկ չափ լաւ բրէ :

Ախտ կամ մոլորքիւն մը կշտացընելու աւելի ստակ կերբայ քան թէ երկու գաւակ սնուցանելու :

Թերեւ շահերը քսակը կը ծանրացընեն. իսկ մեծ շահերը սակաւագիւտ են :

Ով որ կուգէ մեկ տարուան մէջ մեծ հարստութիւն դիզել, վեց ամիս չըջած բանտ երբայն աչք առնելու է :

Աշխատութեան պտուղը ամենէն քաղցր գուարձութիւնն է :

Կարիլ կարիլ վազող շուրթ քարը կը փորէ, եւ կը կնուած թրթու, հարուածներով բարձրաբերձ կաղնիներ վար կ'առնուին :

Եթէ խանութդ աղէկ պահես, խանութդ ալ գրեզ աղէկ կը պահէ :

Քաղաքավար ու անոյշ կերպերը մշտախօս յանձնարարական եամակներ են :

Անոյշ խօսքերը վաճառականին բերանը չեն

յաւիտեան ապրիլ կասկածանաց մէջ՝ որ է դուստր վատոյքեան եւ մայր անմիաբանութեան : Թողէք, կաղաչեմ, մոլորիմ այս անմեղ մոլորութեամբ զոր խոհեմութիւնը, մարդասիրութիւնը, եւս եւ ճշմարտութիւնը ինծի կը քեղադրեն. քանզի խոհեմութիւնը ինձ կը սովորեցընէ՝ դատողութիւնս շտապաւ չընել. մարդասիրութիւնը կը հրամայէ՝ աւելի աղէկ կարծիքի երբայ քան թէ գէշի, եւ ճշմարտութիւնը՝ զիս կը խրատէ որ ինքզինքս յանդգնաբար յանցաւորներն դատապարտելու չտամ, որպէս զի չըլլայ թէ անիրաւ դատապարտութեամբ անմեղներուն վնաս ընեմ :

Թարգմանեաց ի գաղղիականէ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶՐԱՍՈՒՆԵԱՆ

Աշակերտ Արեւելեան Ազգային Վարժարանի :

մաշեցընել. եւ հաճոյացած ապրանքը կես մը վաճառուած է :

Սիրելի վաճառականին վաճառքը շուտով կը բշուի :

ԱՄԵՆԷՆ ԿԵՂԵՑԻԿ ԾԱՂԻԿ

Ծաղկած վարդենիի մը առջեւ կեցաւ բարեկիրք եւ աշիւմ Առաքել, ու քոյրերուն ըսաւ.

— Ամենէն գեղեցիկ ծաղիկը վարդն է :

— Սա ամբիւն մէջ բուսած շուշանն ալ վարդին վար ջմնար գեղեցկութեամբ, պատանխանց երանումին : Այս երկուքը ծաղկանց մէջ ամենէն գեղեցիկները կը համարիմ. ծաղիկ մը չկայ որ անոնց կարենայ հաւասարիլ :

Անդիսն նուսեն, չըլլայ թէ ըսաւ, սիրուն մանուշակը վար զարնէք. մտքերնիդ բերեք մէյմը որ զարնան բերանը ճրջալի գմեղ գուարձացուց :

Մայրերնին որ խելացի խաբուն մի էր, եւ որդուցը խօսակցութիւնն ուշադրութեամբ մտիկ ըրեր էր, ըսաւ անոնց.

— Որդեակք իմ, այս ձեր սիրած ու հաւանած երեք տեսակ ծաղիկներն երեք գեղեցիկ առաքիւնութեանց օրինակ են : Պարկեշտագեղ մանուշակն օրինակ է պարկեշտութեան. ձիւնափայլ շուշանն անմեղութեան օրինակ է. իսկ այս կարմրագեղ վարդը կարծես թէ բերան ունի ու ձեզի կը գրուցէ. « Մանկունք, Աստուծոյ, մարդկանց ու ամէն լաւ բանի սիրովը սրտերնիդ վառի բորբոքի. վասն զի այս սերն է միայն ճշմարիտ բարիք : »

Մանկական տիեզ ծաղիկները հրաշագեղ բարձր նշանաւորութիւն են վարդ եւ անմեղ :